

ԱՅՆ ԳԻՇԵՐԸ

Ես այնպէս դժբախտ էի այն գիշերը:

Նա ինձ լքեց՝ այն կիսը, անսիրտ, անողորմ կերպով լքեց. ներս փախայ շտապով, փակուեցի սենեակումս, որ աշխարհից ծածուկ իմ ցաւն ապրեմ մենակ։
Յաւի միայնութիւնը։

Դա հսկայ լեռ է կրծքին, որի տակ տնկալ էլ չի լինում։ Եւ հոգիս մխում էր։

Դուրսը ցուրտ էր ու խաւար. կատաղի քամին անճար, անապաստան մուրացիկի պէս յամառ կերպով ծեծում էր իմ լուսամուտը, լիզում էր խոնաւ ապակիները, նվիռում էր բացուածքներում, կամ խօլ, այլանդակ ծիծաղով քրքջում էր ծխնելոյզի մէջ։

Քամու ձայները մութ գիշերին... երբ վիրաւոր սիրտդ տնկում է, և նրա թարմ խոցից արիւնը ընկնում է կաթիլ-կաթիլ, ընկնում է և կրծքիդ տակ մի սելին կազմում, ուր խեղդւում են բոլոր յոյսերդ ու եւսազներդ, որի վրայ թևատարած՝ սաւառնում է մահը։

Վառարանիս մէջ փայտերը վառւում էին ճարճատելով, և նրանց մեծ ու փաքր բոցերը, մերթ դեղնակարմիր, մերթ կանաչ, երերուում էին, դողդողում, դրսի ձայների ահից մեռնում էին մեղմիւ։ Այդպէս մարեցին հոգուս մէջ յոյսերը և խաւարը թագաւորեց այնտեղ։ Մտածում էի ես։ Լամպիս լոյսը կարմիր լուսամփոփի տակ բոսորային ցոլքերով ներկել էր սենեակիս առառտաղը, պատերն ու կահկարասին, ամենին՝ որ երեկ վարդագոյն էր, այս գիշեր լողում էր արիւնադոյն փայլի

մէջ։ Անդամ անկիւնների ստուերները բոսողային քող
էին առել վրաները և առանձնացած ու խեղճ՝ մեղմիւ
փափսում էին արիւնագոյն ցոլերի հետ՝ չորս կողմից
ինձ վրայ տնկած սև անլոյս աչքերը։ Եւ դրսի հողմը,
որ նպովում էր ու լալիս, և՛ երերուն բոցերը, որոնք
դողդողում էին ու հանդշում խուսափող կեանկերի պէս,
և՛ վախլուկ ստուերները, և՛ մանաւանդ այս արիւնագոյն
առարկաները, ամենքը ասես իրար հասկանում էին,
այն գիշերուայ գաղտնիքը գիտէին, հեղնում էին ինձ,
ապրում էին մի կեանկով, որ դուրս էր ինձանից, որ
իմ գէմ էր։

Սյն գիշեր ես խորիժ էի իմ յարկի տակ ու մեր-
ժուած։

Վառարանի առաջ նստած՝ նայում էի կրակին, և
սև մտքերով ծանր գլուխս քաշ էր ընկել կրծքիս։ Իմ
կեանքի ուղին յանկարծ մթնեց. ես պէտք է մեկնէի,
հեռանայի այստեղերից, որ էլ նրան երբէք չհանդիպեմ։
Ինձ թուում էր, թէ ես նրան պատահելիս կարող եմ ըս-
պանել, կը սպանեմ տուանց տատանուելու և յետոյ ան-
հնարին սարսափից ու սիրուց կը քրքջամ ու կը հեկե-
կամ՝ վաղվելով փողոցներում։

Նա ինձ այնպէս անսիրտ կերպով մերժեց։ Վեր-
ջին տեսակցութեան ժամանակ նա ասաց, թէ ինձ այլ ես
չի սիրում, ճիշտ այն եղանակով, ինչպէս ճաշի ժամա-
նակ կարող էր ասել, թէ «ես սալաթ չեմ սիրում»։

Մենք խօսք էինք տուել իրար յայտնել այդ զար-
հուրելի ճշմարտութիւնը, հէնց որ մեզանից մէկնումէկի
հոգու մէջ մարող կրակի պէս սէրը հանգչէր. բայց և
այնպէս, երբ նա ասաց ճակատագրական բառերը, ինձ
թուաց, որ նա մի սառը պողվատ միսեց կուրծքս և
հանդարտութեամբ խառնեց՝ իմ անհնարին տանչանքը
գիտելով միանդամայն անտարբեր։

«Գնա, մեկնիր այստեղից, սիրելիս, աւելացրեց նա,
լաւ ես մտածել, ժամանակն ու տարածութիւնը հզօր
սպեղանի են վիրաւոր սրտերին, կ'ապրես և կը մոռա-

նաս»: Եւ նա կարողանում էր խօսել այսպէս, երբ ես
հեկեկում էի ու չանդռում կուրծքս եղունկներով։ Դէմքը
պաղ մարմարի պէս, աչքերը անյօյզ, ձայնը հանդարտ,
և էլի գեղեցիկ էր։

Ինչ զարհուրելի է կինը, երբ դադարում է սիրե-
լուց. նա կամ հրեշտակ է, կամ վագր։ Իմ պաշտած
էակը մի վագր էր։

Ապճւշ կեանք, գնալ, կորչել ժամանակի և տարա-
ծութեան մէջ, գիտակցաբար չքանալ... մարդը դրա-
համար է ծնուռմ, աշխարհ գալիս։

Եւ այդ ժամանակն ու տարածութիւնը... դրանց
մասին էի մտածում։ Եւ մէկը, և՝ միւսը ինձ հաւասա-
րապէս անսահման էին թուռմ, և ես հաւատս կորցրած
ու թունոտ հոգով, հալածական, մերժուած ու անյօյս
գնում էի լողալու անհունի թախծոտ մշուշի մէջ որպէս
մի հիւլէ։ Տիեզերքն այն գիշեր ինձ համար դատարկ
էր, մնացել էր միայն քամին, մի խենթ քամի, որ փը-
չում էր շղթայազերծ եղած, մոնչում էր, հեծկոտում,
լալիս ու հաջում. նա գալիս էր այն մուժ անյայտից,
ուր ես գնում էի կորչելու, և ես պարզ ու որոշ լսում
էի նրա վզզոցի մէջ՝ գնա, հեռնւ... ճւ, աճւ, աճւ,
աճւ։ խաւարի այդ այլանդակ զառանցանքից հոգիս
մրսում էր ու դողդողում։

Փշիր, թշուառական խենթ, փշիր, թափ տուր այս
հսկայական ցեխի գունդը, թող նա ճաքճքի և փը-
շուր-փշուր ցրիւ գայ անսահմանութեան մէջ։

Ես ատում էի աշխարհը, ուր այնպէս դժբախտ էի,
ատում էի ամենքին, ամենինչ երբ այս երեկոյ շտա-
պում էի տուն՝ սիրած կնոջ շրթունքներից սոսկալի
յայտնութիւնը լսելուց յետոյ, փողոցի բոլոր ժպտուն,
դոհ դէմքերը ինձ զայրացնում էին, իսկ մի պարոնի,
որ ուրախ քրքիջով անցնում էր մի տիկնոջ հետ թե-
ւանցուկ, քիչ մնաց մօտենամ և ապտակեմ։ Նա այնպէս
ատելի էր երջանիկ դէմքով։

Զգուելի՛ աշխարհ, ուր միայն ես եմ այսպէս դըժ-

բախտ, մերժուած, արհամարհուած։ Ո՞վ է բաժանում
բախտերը, մի՞թէ մի էակ, որ սիրու ու դութ ունի։

Դուռս կամացուկ բացուեց և ներս մտաւ մի տառ
ոլն-տաճներկու տարեկան փոքրիկ տղայ՝ ձեռքին թըզ-
թի մէջ փաթաթուած մի բան։ Կարմիր լոյսով շացած՝
նա կանգ առաւ դրան մէջ և աչքերը տպտպացնելով
նայում էր իր շուրջը։ Բայ երկոյթին շփոթուած էր և
փախենում էր բռնուած թռչնի պէուզ

Ես գժդոհ էի, որ իմ մտքերն ու միայնութիւնը
խանգարեցին։

—Ի՞նչ ես ուզում։

Նա լուռ էր։

—Ո՞վ ես, ի՞նչ ես ուզում, կրկնեցի հարցու զայ-
բացած։

Նա աւելի շփոթուեց. վիզը ձդձդեց յետ ու առաջ,
թուքը կուլ առւեց։

—Այս տուին... ասին տար պարոնին, այ բերեցի...։

Նա մեկնեց ձեռքի փաթեթը։

—Ո՞վ տուեց, ի՞նչ, ապհուշ երեխայ։

—Զգիտեմ, խազէյինն ասաց տար, տուր պարոնին,
մի տիկին եկաւ առաւ, այն, որ ձեզ հետ դալիս էր ա-
ռաջ։

Նա է, հրաժեշտի փունջն է ուզարկել. վագր...
թաթերի մէջ արխնու սիրու բռնած՝ զուարճանում է,
անողնը, անողնը, մռմռացի ես և կրկին գլուխս քաշ
ընկաւ կրծքիս. լուռ էր սենեւակում։ մէկ վառառող
փայտերն էին ճարճատում, դալարում ու բոց արձա-
կում։

Մանուկն իր տեղումն էր։

—Տուր ինձ այն, առաջի առանց տեղիցս վերկենաւ-

լու։

Մանուկն անշարժ էր։

—Տնւր ինձ, չի՞ս լում։

Նա շարունակում էր անշարժ մնալ։

Ես վրդովուած ոտքի թռայ, մօտեցայ, նա յետ-
յետ բաշուեց ու կծկուեց դրան առաջ:

Խենթ է երեխան, մտածեցի ես, խլեցի ծաղկե-
վունջը, փետեցի, ձգեցի յատակի վրայ և արորեցի ոտ-
քելով:

Նայեցի երեխային. նա կանգնած տեղում դողում
էր և աշխատում էր դուրս ընկնել:

—Ինչո՞ւ ես փախչում:

—Վախենում եմ:

—Ինչո՞ւ ես փախենում:

—Ել ծեծես, այստեղ երբ գլխաւորը զայրանում է,
ծեծում է, դու էլ զայրացած ես...

Ես մնացի կարկամուած ու ամօթահար, զայրոյթա
վայրկենապէս իջաւ. ահա մի դժբախտ արարած, որ
հաւատացած է, թէ ով ուզի՝ իրան կը ծեծի:

Մօտեցայ և բաղցրութեամբ բռնեցի նրա ձեռքը.
նա դճղում էր:

—Մրտում ես:

—Հա, դուրսը շատ ցուրտ էր, ես միշտ մրտում
եմ:

—Մօտեցիր, տաքացիր:

Նա չհամարձակուեց: Ես քաշեցի նրան կրա-
կի առաջ և այժմ միայն նայեցի ուշադրութեամբ:
Նա հագած ունէր հասակաւորի մի իւղոտ, կարկա-
տած բաճկոն, որի մէջ նրա վտիտ մարմինը բու-
լորովին կորել էր. տանջուած դէմքը դեռ մի բան
պահել էր մանկական թարմութիւնից, բայց աչքերի
տակ և շրթունքների շուրջը ցաւոտ գծեր կային, աչքե-
րի մէջ ամենինչ մարել էր և մնացել էր միայն անճար
վախի զգացմունքը: Նա երեկի սաստիկ վախենում էր,
որովհետեւ երբ ես որևէ անմեղ շարժում էի անում, նա
ինքնապաշտպանութեան բնազդով շտապում էր ձեռքով
գլխին հովանի անել՝ սպասելով հարուածին: Նրա իւ-
րաքանչիւր աչքի տակ, այտի վրայ միշտի կաթիլ ար-
ցունք կար կախուած, որ փայլում էր լոյսի ցոլքերի

տակ։ Նա իր վտիտ կեղտում ձեռները տարածեց կրակի առաջ և շրթունքներն ուղցրած՝ տաքանում էր, ազըլ չհեռացնելով ինձանից, ծեծուած կապիկի պէս։

Ես նայում էի նրա արցունքին։

—Դու լալիս ես։

—Չէ, չեմ լալիս... ինչու լամ։

Նա աջ թեռվ սրբեց աշքերը, բայց մի վայրկեան յետոյ երկու ուրիշ կաթիլներ նոյնքան փայլուն և նոյնքան խոշոր հօսեցին աշքերից և սառեցին նոյն տեղում։ Նրանց աղբիւրն անսպառ էր, մանուկը առանց իմանալու լալիս էր անվերջ։

Ես գարձեալ նայում էի այդ զոյդ արցունքին, իսկ դրսում լուսամուտիս տակ, ծխնելոյզի՝ մէջ քամին շարունակում էր հեծեծալ «առւ, առւ, առւ...» և բոցերը դողդողում էին, կծկում ու ու բացւում, և ստուերները անկիւնում փսփսում էին։

Այժմ աւելի և աւելի յիշում էի այդ երեխային. քանի անդամ եմ տեսել նրան, երբ ծաղիկ էի գնում. մի անդամ էլ նրա հետ երկար ծիծաղում էինք ծաղկեվաճառի խանութի այս փաքրիկ աշակերտի վրայ, ուրովհետեւ խիստ ծիծաղելի կերպով գլուխը փաթթել էր մի գունաւոր լաթով. ինչու էր փաթթել, մենք չեմ մացանք, բաւական է որ նա ծիծաղելի էր, մենք էլ այնպիսի խենթ պահանջ ունենաք ուրախութեան, ծիծաղի, մենք այնպէս սիրում էինք իրար, այնպէս երանիկ էինք։

—Լսիր, դու մի օր գլուխդ կապել էիր անցեալ։

ՀԵՐԵՐ

—Հա՛մ, պատռած էր, արիւն էր գալիս։

—Ո՞վ էր պատռել։

—Մեր գլխաւորը. նա ամենայն օր ինձ ծեծում է։

—Դրա համար ես միշտ լալիս։

—Չէ, ես չեմ լալիս, առաջ լալիս էի, հիմա էլ

չեմ լալիս, ծեծում է, բայց չեմ լալիս։ Եւ նա փորձեց ժպտալ, որ ծեծում են ու չի լալիս։

—Այսօր էլ են ծեծել:

—Այսօր... հա, իհարկէ, ինձ ամեն օր ծեծում են,
բայց այսօր լաւ էր, բռունքքով խփեց մէջըիս, այ այս-
պէս (նա ցոյց տուեց բռունքքները). շատ չցաւեց, ան-
ցեալ օրը ոտքով խփեց, շատ ցաւեց. գիտես, —շարունա-
կեց նա աւելի և աւելի վստահացած, —նրա կոշկի ծայ-
րը սուր է, որ կպչում է, շատ է ցաւում, երբ մի կողմ եմ
քայլում, չի կպչում, նա վրայ է հասնում, բռնում, պառ-
կեցնում է, յետոյ վերցնում է ոտներիցս ու ձեռներիցս,
բարձրացնում է, յետոյ զարկում յատակին՝ թըրը՝ փ,
թըրը՝ փ. յետոյ մէջքս այնպէս է ցաւում, այնպէս է
ցաւում. յետոյ ես ճշում եմ պինդ, պինդ, նա թող-
նում է. գիտես, երբ ճշում եմ, միշտ թողնում է. ախոր
վախենում է, որ մեռնեմ. որ մեռնեմ, նրան կը բռնեն-

Նա կրկին ժպտաց, որ իր տէրը վախենում է, երբ
ինքը ճշում է ցաւեց, և եթէ մեռնի ծեծի տակ, իր դահ-
ճին կը բանտարկեն:

—Ինչու չես դուրս գնում այդտեղից:

—Ո՞ւ գնամ, ինձ հաց են տալիս, այ, շոր են
տուել (նա ցոյց տուեց իր ահագին բաճկոնը). մի ան-
գամ փախայ, մայրս էլի յետ բերեց, ասաց՝ տեղ չկայ,
ես դռներում լուացք եմ անում, քեզ ի՞նչպէս եմ պա-
հում, յետոյ լաց եղաւ. ես միայն մայր ունիմ, որ փախ-
չեմ, էլի լաց կը լինի. մնում եմ. ծեծում են, շատ են
ծեծում:

Նա լռեց և շարունակում էր ձեռքերը հանդարտ
տաքացնել շրթունքներն ուռցնելով ու փշելով. ես էլ
ամեն բան մոռացած՝ մտախոհ նայում էի այս փոքրիկ
դժբախտ արարածին, որ արինագոյն լոյսով ողողուած՝
նկարագրում էր իր անծայր ցաւը, իր կրած տանջանք-
ները մի կտոր արիւնոտ հաց ձեռք բերելու համար:
Մարմնացած տառապանքներն էր կանգնած իմ առաջ.
ինչ էր իմ սեփական վիշտը նրա կրածի հանդէպ. այդ
աշնուկը մի հսկայ էր, և ես մի գաճաճ. մարդակեր
աշխարհի առաջ նա մի անպաշտպան զոհ էր, որի բու-
նուեմքի, 1904.

լոր զէնքը մնացել էք մի գերբնական համբերութիւն կրելու ցաւը, ատամներն իրար վրայ սղմած փշրելու չափ։ Ահա թէ ով է ծաղիկ պատրաստում մեր հաճոյքի, մեր զուարճութեան համար, ահա թէ ում փշուած, արիւնոտած ձեռքերն են հիւսում այն ուս փնջերը, որոնցով զարդարուում են գեղեցիկ կրծքերը կեանքը լի է զարհուրելի հակասութիւններով, ինչեր ունի նա թագցրած իր անծայր խորշերում։ Հոտած շարաւալից մարմին է նա, գարշահոտ պալարներով, ուր ճիճուներ են եռում իրար գալարուած, իրար կծելով և արիւն ու թոյն են ծծում։ Իմ խոհերն ընդհատեց երեխայի ձայնը.

— Ե՞նչ կարմիր է ձեր լոյսը, կ'ասես արիւն լինի. գիտես, էն օրը թքիցս այնքան արիւն եկաւ. նա բռնեց, գլուխս պինդ զարկեց պատին, յետոյ արիւն եկաւ, աշքերս շաղուեցին, լոյսը այսպէս տեսայ, այ, այս լամպի լոյսի պէս, կարմիր, կարմիր. ի՞նչ կարմիր է։ Եւ նա կրկին ժպտաց, որ իմ սենեակի լոյսը արնագոյն է և նրան յիշեցնում է իր սեփական արիւնը։ Դարձեալ լուռ էինք։

— Այ, այ, այ, — բացադանչեց երեխան յանկարծ՝ վառարանից հեռանալով, — ես ինչպէս ուշացայ, հիմա ինձ էլի կը ծեծեն, դուրսն էլ քամի է, ցուրտ։

Նա գիմեց զէպի դուռը

— Կաց, իմ փոքրիկ, կաց, ես դալիս եմ քեզ հետ, չեմ թողնի, որ ծեծեն։

Շտապով հագայ վերարկուս, գլամարկս վերցրի, մի արծաթ դրամ տուի երեխային, նա նայեց ափի մէջ, ժպտաց և ուրախացած առաջ անցաւ։ Մենք դուրս եկանք։

Դուրսը դժոխք էր, քամի ու ձիւն. նա վազում էր բոլորովին մօտիկ իմ յետեից՝ քամուց պաշտպանուելու համար, ծաղկեվաճառի խանութը հեռու չէր. այնաեղ մեր առաջ ցցուեց մի փոքրիկ մարդ, փոքրիկ գլսով, կապոյտ, պլստան աշքերով և այնպիսի խղճուկ, մեղմ

գեմքով, որ կարելի էր կարծել, թէ նա մարմնացած բարութիւն է:

Նոր չէի տեսնում նրան, բայց և այնպէս նա այսօր ինձ առանձնապէս անմեղ ու խեղճ թուաց: Միւթէ հնարաւոր է այս փոս ընկած, ողորմելի կրծքի տակ մի գաղանային սիրտ, սա ինչ զարհուրելի հակասութիւն է, մտածում էի ես, մինչդեռ մարդուկը կանգնած էր իմ առաջ՝ ձեռքերը յետեւ դրած և պլստան աշըերը մէկ ինձ, մէկ փոքրիկ երեխայի վրայ դարձնելով:

— Լսիր, դու ինչո՞ւ ես ծեծում այս խեղճ երեխան յին:

— Ե՞ս, նրան... նա այնպէս անպիտան ստախօսն է, — պատասխանեց մարդուկը առանց յուզմոնքի. — Դուք էլ հաւատացել էք. այ, այսպէս, ուր գնում է, ուշանում է. նեղանում, խրատում եմ, վնաս եմ անում, քանի ժամ է կորել է, սասցի շուտ արի:

Երեխան կծկուած՝ գլուխը քաշ էր գցել և աչքի տակից վախվսերով նայում էր մերթ ինձ, մերթ իր գլխաւորին: Ես նկատեցի, որ նա առանց նկատելու կամաց-կամաց մօտենում է ինձ:

— Ա՛յ տղա, ես քեզ երբ եմ ծեծել, դարձաւ մարդուկը սարսափահար երեխային քաղցրութեամբ:

— Նա ինձ չի ծեծել, պարոն... իսկի չի ծեծել... Եւ նա կամացուկ ձեռով սրբեց այտերի վրայից արցունքի զոյդ կաթիները կարծես իր դժբախտութեան վկայութիւնը ջնջելու համար:

Իր անզօրութեան մէջ ողորմելին ստում էր:

— Ահա հարցրէք, — գիմեց ինձ փոքրիկ վարդը յաղթական կերպով, — ես նրան երբէք չեմ ծեծել, ինչո՞ւ ծեծեմ, աչքի լոյսի պէս եմ պահում, դուք էլ դալիս էր մարդու վիրաւորում իզուր տեղը: Ա՛յ տղա, գնա դործիդ, — վերջացրեց նա՝ ցոյց տալով խանութի խորքի դուռը: Երեխան ծածկուեց. ես մնացի կանգնած, նայում էի այս բարի դէմքով փոքրիկ մարդուն և ինքս ինձ հարացընում; թէ ուր է նա տեղաւորել իր դաղանը, որի

հետ վարւում է իր ուղածի պէս, բաց է թողնում, երբ կամենում է, զսպում է, երբ պէտք է համարում։ Մինչ այդ նա անտարբերութեամբ վերցրեց ցնցուղը և ծաղիկներն էր ջրում։ Միշտ բարի, միշտ խաղաղ։

— Ասիր, ես քեզ յատկապէս խնդրում եմ նրան չեծես, նա այնպէս դժբախտ է, մենակ, անճար, անտէր երեխայ է։

— Իհարկէ, իհարկէ, ես գիտեմ, մենակ է, լաւ տղայ է, ինչու ծեծեմ։

Եւ նա ժպտաց չոր, անողորմ ժպտով։ Ես նայեցի և դուրս փախայ այդ որջից՝ ինչ անելս շիմանալով։ Բայց պէտք էր մի բան անել այդ երեխայի համար, գնում էի, և ինձ թւում էր արդէն, թէ լսում եմ նրա անողորմ ճիշն ու հեծեծանկքները։ Զիւնը թափուում էր քուլայ-քուլայ, քամին վզզում էր կատաղաբար։ Տուն գառնալու ցանկութիւն չունէի, քայլեցի ամայի փողոցներով հեռու, հեռու։ Քամին բարձրացնում էր ձիւնից փոշու ամպեր, պատում էր շէնքերը, որնց ստուերադները կորչում էին մի վայրկեան, տպա իրանց այս կամ այն կողը կամ կատարը ցոյց տալիս մութ-կաթնագոյն զանգուածի տակից։ Լաստերները պլպլում էին անփայլ և նրանց ցոքերը մեռնում էին առանց կարողանալու մառախուղը պատռել։ Զիւնը ուժով գարկուում էր իմ երեսին, գաղում էր այտերս, ծեծում էր գլուխս, բայց ես քայլում էի ուշացած ճամբորդի պէս, որ մի անկիւն է վնտրում ապաստանելու համար։ Երեք պատկերներ փոխառփոխ աշքիս առաջ էին. մերթ տեսնում էի նրան իր մարմարէ դէմքով, իր սառը, անողորմ գեղեցկութեամբ, այնպէս, ինչպէս նա էր վերջին անգամ, մերթ այն փոքրիկ դժբախտ երեխային, որ ճշում էր չմեռնելու համար, և մերթ այն փոքրիկ մարդին, որ այնպէս բարի արտաքինի տակ ծածկած ունէր մի արիւնարբու գաղան։ Այս երեք պատկերները դժոխային պարով անցնում էին աշքիս առաջից, մինչև որ քամու մի կատաղի հոսանք ձիւնի

ամպի մէջ պարփակում էր ինձ, ծեծում էր երեսս, դրւխս, ես սարսուռմ էի, դէմքս ծածկում և կանգ առնում մի վայրկեան։ Անցնում էր քամին, և ես քայլում էի վերստին։ Ուշ գիշեր էր, երբ տուն դարձայ։

Դրանը հասնելով ես կանգ առայ քարացած. իմ առաջ աստիճանների վրայ կծկուած էր նոյն երեխան և դողդողում, հեծեծում էր ցրտից։

— Ի՞նչո՞ւ ես այստեղ։

— Եեծեցին ու դուրս արին... դու եկար բարկացար, նա էլ քեզանից յետոյ կօշկի ծայրով այնպէս խփեց, յետոյ թեկիցս բռնեց դուրս ձգեց ձիան վրայ, սաքս քերթուեց, արիւն եկաւ... վերկացայ, կաղալով եկայ այստեղ. ուր գնամ... տեղ չգտայ. մրսում եմ, ցաւրտ է։

Նրա ատամները իրար էին զարկւում, և նա դողդողում էր ամբողջ մարմնով, և արցունքն աչքերից թափւում էր, թափիւում Զեռքից բռնած ներս տարայ, նա դարձեալ կանգնեց վառարանի առաջ իր նախկին տեղը և տաքանում էր, յետոյ կարծես ուժասպառ՝ նստեց, գլուխը քաշ ընկաւ կրծքին, և նա խոր քուն մըստաւ. Ես նրան ծածկեցի վերմակով և հեռու նստած՝ նայում էի նրա գունատ դէմքին, նրա անհանդիստ կրծքին, ուր ահագին վիշտը դեռ հեկեկում էր՝ ցնցելով նրա փոքրիկ, ջարդուած մարմինը. Երբեմն-երբեմն նա շարժում էր ձեռքը կամ ոտքը, կծկում ու ճշում «ռւ, ռւ». Նա լալիս էր երազի մէջ, իսկ քամին դրսից պատասխանում էր նրան՝ «առւ, առւ, առւ...».

Դժոխքի գիշեր։

Մէկը սէրն էր կորցրել, միւսը իր հացն ու ապաստանը, երկսով էլ մերժուած, երկսով էլ սեւաւոր ու գժբախտ։

Միթէ երկինքը նզովել է սէրն ու հացը, որ երկուան էլ արիւնով ու արցունքով շաղախուեն։ Այս երեխան էլ մի բռուն սիրոյ ծնունդ է գուցէ, և կոյս շըրթունքների բոց համբոյրից թռած կայծն է ապրում և

սրա հոգում: Մնուել է և սողում է աշխարհում, ծեծում է, արցունք է քամում միայն կշտանալու համար: Նզովուած սէր, որ աշխարհը լցնում է արցունքով ու հեծեծանքով, որ ծնում է կոյր ճակատազրի պէս, և քաղցած միլիօնները սռնում են մի կտոր հացի համար և տրորում են իրանց գալարուող աղիքները: Այն սև գիշշերին ինձ համար ամենինչ կորաւ, և' սէր, և' խինդ, և' խենթ յոյզեր, և' վառ երազներ, և բոլորի տեղ մըսնաց միայն մի սև անդունդ, ուր գալարուում էր ցաւը հազարգլխեան վիշապի պէս, և նրա մութ զանդուածի վրայ վայլուն կէտերը լոկ արցունքներ էին բիւրաւոր մարած աչքերի: Նայում էի այդ անդունդին, ուր թաղուեց նաև իմ գեղեցկուհին՝ տանելով իր հետ իմ նըսզովուած սէրը, որի փոխարէն անդիտակցարար ինձ ուղարկել էր այս գիշեր իմ մերձաւորի ցաւը: Այն մութ անդունդի պէս այժմ խաւար էր իմ հոգում, և վիշաը եռում էր սրտում, խեղդում էր կոկորդու Եւ յանկարծ ուռած կուրծքս փուլ եկաւ մէկէն ինչպէս վարարած գետի աւերած պատուարները, և յորդ արցունքները թափուեցին աշքերից: Չդիտէի, թէ ում համար եմ լալիս, ինձ, այս երեխայի, թէ տառապող աշխարհի, որ սիրում է, ծնում և լալիս:

Երեխան շարունակում էր քնի մէջ ցնցուել ու նվիալ՝ «ու, ու...» քամին դրսում կատաղօրէն մոնչում էր ու հեծեծում՝ «առ՝ առ՝, առ՝...» ողջ տիեզերքը լի էր ցաւի անհուն ճիշերով, որոնք ամենքը միասին նզովում էին և' սէրը, և' ծնունդը, և' աշխարհը:

Քաղցածների հսկայական երգն էր այն ուշ գիշերին:

Ա. ԱՀԱՐՈՒՆԵԱՆ